ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարիկյան Ռազմիկ Լևոնի

Հայ կանոնական (եկեղեցական) իրավունքի ձևավորումը և զարգացումը՝ IV-XII դարերում (պատմատեսական վերլուծություն)

ԺԲ.00.01. - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2016

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Марикян Размик Левонович

Формирование и развитие армянского канонического (церковного) права в IV-XII веках (историко-теоретический анализ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности:
12.00.01. - «Теория и история государства и права; история государственных и правовых учений»

Ереван -2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ.Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Գ.Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ.Մ Գրիգորյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. դեկտեմբերի 9-ին, ժամը 16^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, Երևան 25, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. նոյեմբերի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
իրավաբանական գիտությունների թեկնածու Ջ.Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г.Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р.Г. Петросян**
кандидат юридических наук, доцент **Г.М. Григорян**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 9 декабря 2016г. в 16^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г.Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читательном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 9 ноября 2016г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук Дж.А. Айрапетян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի հետազոտության արդիականությունը: Յուրաքանչյուր ժողովուրդ /ազգ/, յուրաքանչյուր սերունդ պատմական զարգացման տարբեր փուլերում կրկին վերընթերցում, վերաիմաստավորում ու սրբագրում է իր պատմությունը: Պատմությունը հարկավոր է ամենքին՝ պետական, հասարակական-քաղաքական գործիչներին, գիտնականներին, մանկավարժներին, ընդհանրապես, յուրաքանչյուր քաղաքացուն, որը քիչ թե շատ մտահոգված է ազգի անցյալով, ներկայով և ապագայով: Այս առումով, բոլորն էլ դիմել և շարունակում են դիմել պատմական անցյալին՝ գտնելով այն, ինչ իրենց պետք է, ինչ որոնում են:

Անցյալում կուտակված փորձին և գիտելիքներին, պատմական զարգացման ընթացքում ստուգված հայեցակարգերին, մտքի չափանիշներին, ավանդույթներին, դասականներին և արժեքների կայունացած համակարգերին դիմելը բոլոր ժամանակաշրջաններում հանդես է եկել ինչպես մարդկության, այնպես էլ կոնկրետ հասարակության և ազգի սոցիալ-հոգևոր կեցության, ինքնաճանաչման և ինքնահաստատման կարևորագույն ձևերից մեկը:

Այս կապակցությամբ, անհրաժեշտ է ընդգծել, որ հին և միջնադարյան հայ իրավունքի (աշխարհիկ և կրոնական) ուսումնասիրությունը դասվում է հայագիտության հետազոտությունների կարգին, իսկ «Հայագիտությունը որպես գիտական համակարգ և պետական-ազգային քաղաքականության ծրագրի էական բաղադրիչ՝ մեծ կարևորություն է ստանում հատկապես Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության պայմաններում»[1]:

Հետևաբար, հայ կանոնական իրավունքի հետազոտությունն ունի ոչ միայն գիտական-ճանաչողական, այլև գործնական-կիրառական նշանակություն և ձեռք է բերել արդիական հնչողություն:

Վերոնշվածով է պայմանավորված ատենախոսական աշխատանքի թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Հայ կանոնական իրավունքի գիտական ուսումնասիրության հիմքերը դրվել են 19-րդ դարի

[1] Տե՛ս «Հայեցակարգ հայագիտության զարգացման»: Ընդունվել է ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 12-ի նիստի № 1 արձանագրային որոշումով):

վերջերին և 20-րդ դարի սկզբներին՝ անվանի հայագետ-գիտնականներ՝ Վ. Բաստամյանցի, Ն. Մելիք-Թանգյանի, Ս. Տիգրանյանի, Խ. Սամվելյանի աշխատություններով, որոնք այսօր էլ ամենևին չեն կորցրել իրենց գիտական-տեսական նշանակությունը: Հասկանալի պատճառներով խորհրդահայ իրավագիտությունը խորությամբ չի ուսումնասիրել հայ կանոնական (եկեղեցական) իրավունքը: Հայ կանոնական իրավունքը մարքսիստական գաղափարախոսության տեսանկյունից ուսումնասիրվել է պրոֆեսոր Ա.Գ. Սուքիասյանի ծավալուն մենագրությունում:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ իրավաբանների պասիվությունը լրացրել են հայ պատմաբանները, մասնավորապես պատմական գիտությունների դոկտոր Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ հրապարակվեց «Կանոնագիրք Հայոց»-ի գիտաքննական բնագիրը՝ արժեքավոր առաջաբանով և ծանոթագրություններով:

Տարբեր ժամանակներում կանոնագիրք մտած կանոնախմբերի քանակը ճշտելու հարցում մեծածավալ աղբյուրագիտական-բանասիրական բնագիտական աշխատանք են կատարել նաև Ս.Տիգրանյանը, Ն. Ակինյանը, Հ. Ոսկյանն անդրադարձել է Սարդիկեի, իսկ Լ. Խաչիկյանը՝ Գանգրայի ժողովի կանոններին:

Հետխորհրդային հայ իրավագիտությունում հայոց եկեղեցական (կանոնական) իրավունքի ուսումնասիրության այս կամ այն ասպեկտներին անդրադարձել են իրավագիտության դոկտոր պրոֆեսորներ՝ Ռ. Ավագյանը, Գ. Սաֆարյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախկին անդամ Ռաֆայել Պապայանը, պատմական գիտությունների դոկտոր Ազատ Բոզոյանը: Սփյուռքում հայ կանոնական իրավունքի ձևավորման և զարգացման հարցերը գիտական խորությամբ ուսումնասիրել է Արամ Մարտիրոսյանը՝ «Հովհաննես Օձնեցու հայկական կանոնների գիրքը (Կանոնագիրք Հայոց). Եկեղեցին, իրավունքը և հասարակությունը Հայաստանում IV-VIII դարերում»:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված գիտնականների հետազոտությունների արդյունքները, այդուհանդերձ գտնում ենք, որ հայ կանոնական իրավունքի հետ կապված ուսումնասիրությունը՝ արդի իրավագիտության տեսանկյունից խիստ արդիական է իր գիտաճանաչողական և գործնական առումով:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն ուսումնասիրության հիմնական նպատակն է վերլուծության ենթարկել միջնադարյան հայ կանոնական իրավունքի ձևավորման, զարգացման և օրինակարգման (կոդիֆիկացիայի) հետ կապված համալիր հիմնախնդիրները:

Ուսումնասիրության նպատակին համապատասխան աշխատանքում ներկայացված են հետևյալ խնդիրները.

✓ ուսումնասիրել ընդհանրական կանոնական իրավունքը՝ քրիստոնեության առաջացման առաջին դարերում.

✓ վերլուծել հայ կանոնական իրավունքի ձևավորման և զարգացման հետ կապված հարցերը.

✓ հետազոտել հայ կանոնական իրավունքի իրավաբանական բովանդակությունը և առանձնահատկությունները,

✓ վերլուծել հայ կանոնական իրավունքի գործադրման սահմանները և ոլորտները,

✓ արժևորել կանոնական իրավունքի դերն ու նշանակությունը միջնադարյան հայ իրավունքի ձևավորման ու զարգացման գործում:

Ուսումնասիրության օբյեկտն է հայ կանոնական իրավունքը իր զարգացման սկզբնավորումից մինչև XII դարը:

Ուսումնասիրության առարկան է հայ կանոնական իրավունքի բովանդակությունը և գործադրության հիմնական ոլորտների իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական աշխատանքի համար մեթոդաբանության հիմք են հանդիսացել պատմական, պատմահամեմատական, համեմատական իրավագիտության, ձևական-իրավաբանական, ձևական-տրամաբանական, համակարգային-վերլուծության և նկարագրական վերլուծության մեթոդները, այսինքն, օգտագործվել են հետազոտության տարբեր մեթոդներն ու սկզբունքները, որոնք օգնել են բացահայտել և պարզաբանել հիմնախնդրի այս կամ այն կողմերը:

Հետազոտության տեսական և աղբյուրագիտական հիմքերը: Սույն ատենախոսական աշխատանքի համար որպես տեսական բազա է հանդիսանում հայ և օտարազգի հետևյալ գիտնականների՝Ռ. Ավագյանի, Մելիք Թանգյանի, Ա.

Մարտիրոսյանի, Ս. Տիգրանյանի, Խ. Սամվելյանի, Գ. Սաֆարյանի, Ա. Սուքիասյանի, Ռ. Պապայանի, Հ. Բերմանի, Ջ. Բրունդուժի, Ե. Գուտնովայի, Է. Կատորովիչի, Ս. Պլեշուկովայի, Վ. Ռոժկովի, Վ. Սոկոլովի, Բ. Տիրնեի և այլոց աշխատությունները:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել պատմաբանների /Ղ. Ալիշան, Ա. Բոզոյան, Մ. Չամչյան, Հ. Մանանդյան, Հ. Օրբելի, Ա. Հովհաննիսյան, Բ. Առաքելյան, Լ. Բաբայան, Ս. Գուրնևիչ, Ս. Նովոսելցև/, փիլիսոփաների /Վ. Չալոյան, Ս. Արևշատյան, Գ. Գրիգորյան, Գ. Խրլոպյան, Կ. Միրումյան/, գրականագետների /Մ. Աբեղյան, Գ. Զարբհանալյան, Ա. Աբրահամյան, Գ. Հակոբյան, Է. Պիվազյան, և այլոց/ աշխատությունները:

Հետազոտության համար աղբյուրագիտական բազա է ծառայել հայ կանոնական իրավունքը, ազգային դատաստանագրքերը, իրավահայտ աղբյուրները, պատմիչների աշխատությունները, ժամանակագրությունները:

Ուսումնասիրության գիտական նորույթը նրանում է, որ հետխորհրդային հայրենական իրավագիտության մեջ, հեղինակն առաջին անգամ համալիր ու համակարգված պատմական-տեսական և իրավահամեմատական վերլուծության է ենթարկել հայ կանոնական իրավունքի զարգացումը սկզբնավորումից մինչև XII դարը: Աշխատանքում գիտականորեն հիմնավորված է այն թեզը, ըստ որի հայ կանոնական իրավունքը հին և միջին դարերում ազգային իրավունքի համակարգում իր սոցիալ-իրավական և գործնական-կիրառական առումով միշտ էլ զբաղեցրել է առաջնային (գերակա) տեղ: Նույնիսկ ազգային դատաստանագրքերի (Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի) պարագայում՝ հանդիսացել է այդ իրավական ակտերի հիմնական աղբյուրներից:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

1. Աշխատանքում բացահայտվել է հայ կանոնական իրավունքի համակարգային և նորմատիվ կարգավորիչ բնույթը, նրա դարավոր կենսունակությունը՝ պայմանավորված պատմաքաղաքական, սոցիալ-իրավական և ազգային-կրոնական հանգամանքներով: Բացահայտվել են հայ կանոնական իրավունքի հիմնական առանձնահատկությունները, որոնցով էապես տարբերվել է

եվրոպական կանոնական իրավունքից. դա նրա բովանդակության առումով երկակիությունն է, որում միահյուսված են եկեղեցական (հոգևոր) և աշխարհիկ նորմերը: Այս առումով, հայ կանոնական իրավունքը կարելի է դիտարկել նաև համահայկական (համազգային) իրավական համակարգ:

2. Միջնադարյան հայ կանոնական իրավունքը իր իրավական կարգավորման որոշակի սահմանափակումներով հանդերձ, նշանակալի դեր է խաղացել ավատական հասարակության քաղաքական, տնտեսական ու հասարակական կյանքում: Այն միջին դարերում նշանակալի բաղադրիչ հանդիսացավ հասարակության մտավոր զարգացման հարցում, քանի որ կանոնիստները կարողացան գտնել ինչպես հին, այնպես էլ նոր առաջացող իրավական խնդիրներին համարժեք լուծումներ և նպաստեցին գործնականում իրավական գաղափարների և հայեցակարգերի ձևավորմանը և զարգացմանը:

Հայ կանոնական և աշխարհիկ իրավական համակարգերի միջև սահմանները մնում էին հեշտ թափանցվող ողջ միջնադարի ընթացքում ընդհուպ մինչև նոր ժամանակները՝պահպանելով կանոնական իրավունքի գերապատվությունը աշխարհիկ (սովորութային) իրավունքի նկատմամբ՝ կենտրոնացված թագավորական իշխանության բացակայության ժամանակ:

3. Հայ կանոնական իրավունքը օժտված է այնպիսի համալիր սոցիալ-իրավական հատկանիշներով, որոնք թույլ են տալիս դիտարկել այն որպես հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատուկ նորմատիվ ամբողջական համակարգ, որը ներառում էր ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ հարաբերությունների սոցիալ իրավական կարգավորման զգալի ոլորտ:

4. Հայ կանոնական իրավունքը համակարգվեց 8-րդ դարի երկրորդ տասնամյակում՝ Հովհաննես Օձնեցու (Իմաստասերի) նախաձեռնությամբ: Կուռ և համակարգված օրինագրքի (կանոնագրքի) ստեղծմամբ հաստատուն հիմքերի վրա դրվեցին ոչ միայն հայոց եկեղեցու իրավական դրությունը, այդ թվում դատաստանական իրավազորությունը, այլև սահմանեց դավանաբանական այն հիմնարար ուղենիշները, որոնք հիմք դարձան հետագա դարերի ընթացքում Հայոց Առաքելական Եկեղեցու քրիստոնեաբանական ամբողջական և ավարտուն նկարագիրը անաղարտ պահելու և համախմբելու միակ համահայկական

հաստատության սեփական եկեղեցու շուրջ, ինչպես նաև դառնալու ազդու միջոց՝ օտարածին օրենքների մուտքը Հայաստան կանխելու և հայրենադավան օրակարգը պահպանելու ու ամրապնդելու համար:

5. «Կանոնագիրք հայոց»-ը որպես Հայոց Եկեղեցու պաշտոնական իրավաբանական փաստաթուղթ, օժտված է նորմատիվ իրավական ակտերին բնորոշ հատկանիշներով՝ նորմատիվությամբ, հրապարակայնությամբ, որոշակիությամբ, կրոնական (եկեղեցական) իշխանության հեղինակությամբ, համապարտադրականությամբ և ուղղակի գործադրության ուժով: Այս առումով, Կանոնագիրքը հայկական «Corpus juris canonic»-ն է և որպես պաշտոնական իրավաբանական ակտ, գործել է ավելի քան 12 դար շարունակ (հետագա լրացումներով և խմբագրություններով) հանդերձ:

6. Հայ կանոնական իրավունքի հեղինակներն էին հիմնականում Հայոց եկեղեցական ժողովները և Հայոց Հայրապետները: Հայոց եկեղեցական ժողովներին մասնակցում էին ոչ միայն եկեղեցու նվիրապետական կարգի հոգևոր ներկայացուցիչները, այլև, որպես կանոն, աշխարհիկ դասի ներկայացուցիչները (ավատատերերից մինչև գեղջուկները): Այս առումով՝ ղեկավարվելով նաև պատմականության սկզբունքով, գտնում ենք, որ հայոց ազգային եկեղեցական ժողովները, որոշակի պայմանականությամբ, կարելի է համեմատել Նոր և Նորագույն ժամանակաշրջանների պառլամենտարիզմի հետ՝ որպես ժողովրդական ներկայացուցչական հաստատություն, որն օժտված էր կանոնադիր (օրինադիր) իշխանությամբ:

7. Հայոց Առաքելական եկեղեցին իր կազմակերպական կառուցվածքով և իրավական կարգավիճակով ավելի կենտրոնաձիգ բնույթ ուներ, քան Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունները, իսկ թագավորական իշխանության բացակայության պայմաններում, ըստ էությամբ հանդես էր գալիս որպես հայ ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչ՝ արտաքին և ներքին հարաբերություններում:

Այդ համազգային նշանակության գործառույթը, եկեղեցին՝ հանձինս իր իրավադիր և իրավարար իրավասություններով իրականացնում էր ողջ հայկական պատմական տարածքի վրա՝ անկախ օտարերկրյա տիրապետության հանգամանքից:

8. Այս առումով, սույն հետազոտությունում հիմանավորվում է այն գիտական վարկածը, ըստ որի 428 թվական Արշակունիների թագավորության կործանման հետևանքով, հայ ժողովուրդը չկորցրեց իր իրավաքաղաքական անկախությունը և ինքնուրույնությունը հանձիս Հայ Առաքելական եկեղեցու՝ որպես միակ համահայկական հոգևոր ու նաև հասարակական-քաղաքական կառույցի, որի շնորհիվ զարգացավ երկրի օրենսդրական գործունեությունը (հանձինս՝ Ազգային եկեղեցական ժողովների և հայոց հայրապետների օրինաստեղծ գործունեության), պահպանվեցին նաև արդարադատության ու իրավապահպան գործառույթները: Այդպիսի իրավական դրությունը հեղինակը աշխատանքում անվանում է եկեղեցապետականություն կամ եկեղեցաիշխանություն:

9. Հայ կանոնական իրավունքի բաղկացուցիչ մասն են կազմում նաև Դավիթ Ալավկաորդու «Կանոնական օրինադրությունները» և Ներսես Շնորհալու կանոնական որոշումները (հատկապես՝ «Թուղթ ընդհանրական»-ը, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել «Կանոնագրքի» հետագա խմբագրություններից):

Դավիթ Ալավկաորդու «Կանոնական օրինադրությունները» (մոտ 1130թ.) հայ իրավունքի պատմության մեջ աշխարհիկ համակարգված օրինագիծ կազմելու փորձերից մեկն է, որի հիմնական աղբյուրը հայ կանոնական և սովորութային իրավունքն է : Կանոնների իրավական փիլիսոփայության հիմքն է՝ մարդու կամքի ազատության ուսմունքը, որով հեղինակը փորձում է մեկնաբանել սոցիալական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ կամավոր ամուսնությունը, ավատատիրական օրինականությունը, աշխատանքի պաշտպանության, հանցանքի և պատժի հարցերը:

Ըստ մատենագրական վկայությունների՝ Դավթի «Կանոնները» որպես «պիտանացու», գործադրվել են:

10. Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթը» միջնադարյան հայ մատենագրության եզակի նմուշներից է, որը ոչ միայն զարգացրել է հայ կանոնական իրավունքի բովանդակությունը (անձի և հասարակության փոխադարձ պատասխանատվության, սոցիալական տարբեր դասերի իրավունքների և պարտականությունների, ճշմարիտ հավատքի, բարոյականության և բարոյախոսության տեսանկյունից), այլև հետագա երկար ու ձիգ դարերի ընթացքում երբեք չկորցրեց և չի կորցրել իր սոցիալական

նշանակությունը նաև ներկայիս բարդ ու հակասական ժամանակաշրջանում:

Շնորհալու «Ընդհանրականը»՝ որպես սոցիալ-իրավական և կրոնական-բարոյական փաստաթուղթ, շարունակում է ուղեցույց լինել նաև ներկայիս հայ հասարակական բոլոր շերտերի համար՝ քրիստոնեավայել վարքագծի, օրինավորության, պարկեշտության, աշխատասիրության, ազգասիրության, բարոյականության, ողջամտության և պատասխանատվության տեսանկյունից:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը նրանում է, որ աշխատանքի դրույթները կարող են օգտագործվել ժամանակակից կանոնական իրավունքի աղբյուրների ուսումնասիրության ժամանակ: Սույն աշխատանքը կոչված է ընդլայնել և խորացնել միջին դարերում հայ կանոնական իրավունքի մասին պատմատեսական պատկերացումները, դրանց ճանաչողական և իմացաբանական նշանակությունը արդի ժամանակաշրջանում:

Աշխատանքում առաջարկված միջնադարյան հասարակության իրավական զարգացման տեսական կառուցակարգը կանոնական իրավունքի օգնությամբ կարող է հիմք ծառայել հրատապ իրավական խնդիրների լայն շրջանակի հետագա ուսումնասիրությունների համար, որոնք կապված են հասարակական կյանքի էվոլյուցիոն զարգացման տարբեր ժամանակաշրջանների հետ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն պատմահրավական ուսումնասիրության գործնական նշանակությունը նրանում է, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել իրավաբանական և աստվածաբանական ֆակուլտետներում, մասնավորապես իրավունքի տեսության և պատմության ընդհանուր և հատուկ դասընթացների ուսումնառության ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել նաև դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ծրագրերի ու մեթոդական ցուցումների պատրաստման համար, ինչպես նաև դասախոսությունների մշակման և վերը նշված գիտություններով բոլոր տեսակի պարապմունքների անցկացման համար:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը իրականացվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետահրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի է ունեցել նաև աշխատանքի

նախնական քննարկումն ու գրախոսությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն ատենախոսական աշխատանքը բաղկցած է՝ ներածական մասից, երեք գլխից, ութ ենթագլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է թեմայի գիտական հիմնավորվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Քրիստոնեության տարածումը Հայաստանում և հայ եկեղեցական (կանոնական) իրավունքի ձևավորումը և դրա օրինակարգումը (կոդիֆիկացիան)» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «**Քրիստոնեության տարածումը Հայաստանում և քրիստոնեությունը որպես պետական կրոնի ընդունումը»** վերնագրով, հեղինակը սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնում է Հայաստանում քրիստոնեության տարածման և աշխարհում առաջին անգամ քրիստոնեությունը որպես պետական կրոնի ընդունման (301թ.) պատմաքաղաքական նախադրյալները:

Քրիստոնեության ընդունումով ձևավորվեց նոր մշակույթ, որը կանխորոշեց հայ ժողովրդի հետագա երկար ու ձիգ դարերի զարգացումը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Հայ կանոնական իրավունքի սկզբնավորումը» վերնագրով, հեղինակը համակողմանի նկարագրում է հայ կանոնական (եկեղեցական) իրավունքի ձևավորման հետ կապված հիմնախնդիրները:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հաստատվելուց հետո,

հայ եկեղեցու դավանաբանական, ինչպես նաև իրավաստեղծ և իրավարար գործառույթները աստիճանաբար ձևավորվելով՝ հետագա շատ կարճ պատմական ժամանակահատվածում ամրապնդվեցին հայ իրականության մեջ:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Հայ կանոնական իրավունքի օրինակարգումը (կոդիֆիկացիան)» վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկում է հայ կանոնական իրավունքի համակարգման նախադրյալները: Հայ կանոնական իրավունքը կոդիֆիկացիայի ենթարկվեց մեծանուն բարենորոգիչ, սրբացված իմաստասեր Հովհաննես (Հովհան) Օձնեցի կաթողիկոսի (717-728) կողմից: Կուռ և միասնական (ամբողջական) «Հայոց կանոնագիրք» ստեղծմամբ հաստատուն հիմքերի վրա դրվեց ընդհանրապես Հայ Առաքելական Եկեղեցու՝ որպես համահայկական հոգևոր և ազգային կազմակերպության հեղինակությունը, և մասնավորապես ամրապնդեց հայոց եկեղեցու օրինադիր և իրավարար իրավասությունները:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Կանոնագիրք Հայոց»-ի իրավաբանական բնույթը և կարգավորման ոլորտները» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «Կանոնագիրք Հայոց»-ի իրավաբանական բնույթը. ընդհանուր բնութագիր» վերնագրով, հեղինակը բացահայտում է «Կանոնագրքի» զուտ իրավաբանական ասպեկտը և կարգավորման ոլորտները: Վերջինս, որպես կանոն, պայմանավորված էր երկրի հասարակական-քաղաքական անցուդարձումներով և հայ հասարակության մեջ աշխարհիկ ու հոգևոր իշխանության փոխհարաբերակցության աստիճանով և բնույթով:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Դատարանը և դատավարությունն ըստ հայ կանոնական իրավունքի» վերնագրով, հեղինակը՝ նախ բացահայտում է հոգևոր (եկեղեցական) դատարանների իրավազորությունը արդարադատության ոլորտում, երկրորդ՝ պարզում է եկեղեցական դատարանի ընդդատության սահմանները և դատական ընթացակարգի հետ կապված հարցերը: Եկեղեցու ընդդատությանն էին ենթակա նաև որոշակի աշխարհիկ հարաբերություններ՝ պսակադրություն, ամուսնալուծություն, ժառանգման հետ կապված հարցերը:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝ «Ամուսնաընտանեկան

հարաբերությունների կանոնական կարգավորումը» վերնագրով, հեղինակը քննարկում է կանոնական իրավունքի այն նորմերը, որոնք կարգավորում էին նշանադրության, պսակադրության, ամուսնալուծության, ամուսինների գույքային հարաբերությունների հետ կապված հարցերը:

Եկեղեցու իրավազորությամբ օրինականացվում էր պսակը և դրանից բխող բոլոր ամուսնական հարաբերությունները գտնվում էին կանոնական իրավունքի սևեռուն ուշադրության կենտրոնում:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Հայ կանոնական իրավունքի հետագա զարգացումը (XI – XII դդ.)» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «Դավիթ Ալավկաորդու կանոնական օրինադրությունները» վերնագրով, հեղինակը նախ արժևորում է Դավիթ Ալավկաորդու կանոնական օրինադրությունները՝ որպես հայ աշխարհիկ համակարգված օրենսդրություն ստեղծելու առաջին փորձը, որը հետագայում փայլուն իրականացրեց Մխիթար Գոշը: Երկրորդ, հեղինակը հանգամանալից վերլուծության է ենթարկում կանոնական օրինադրությունների իրավաբանական բնույթը, բովանդակությունը և կարգավորման ոլորտները (ամուսնաընտանեկան, քաղաքացիական, աշխատանքային, քրեական):

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթը» որպես հայ կանոնական իրավունքի աղբյուր» վերնագրով, հանգամանորեն քննարկվում են «Ընդհանրական թուղթ»-ի իրավական բովանդակությունը, ներկայացվում է նրա անգնահատելի դերն ու նշանակությունը միջնադարյան և հետագա դարերի ընթացքում հայ հոգևոր ու աշխարհիկ դասերի դաստիարակման, ուսուցման և ազգային ինքնության պահպանման հարցերում:

Առանց որևէ չափազանցման, Շնորհալու «Ընդհանրական»-ը արդիական է նաև մեր օրերում, հատկապես անցումային շրջանի օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները տանող հայ ժողովրդի՝ սկսած աշխարհիկ և հոգևոր իշխանություններից մինչև հանապազօրյա հացը հայթայթող հայ հասարակ քաղաքացու համար:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը մշակել է հետևյալ եզրահանգումները.

1. Քրիստոնեությունն ինքնին, որպես ընդհանրական ուսմունք և գաղափարաբանություն, համամարդկային բովանդակություն և ընդգրկում ունի, և այս առումով հսկայական ներուժ ունի ծառայել նաև ազգային շահերի և նպատակների: Դրա վառ ապացույցը Հայաստանի պատմությունն է: Հայաստանն առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, ինչպես նաև ազգայնացրեց քրիստոնեական դավանանքը, նրա գաղափարախոսությունը, այդ թվում նաև Սուրբ Գրքից բխող իրավական պատվիրանները և ավանդույթները, որոնք աղբյուր հանդիսացան հայ կանոնական իրավունքի համար՝ որպես սոցիալ-իրավական նորմատիվ կարգավորիչներ:

2. V դարում անկախ պետության անկումից հետո, փաստորեն. Հայսատանի եկեղեցին ձեռնամուխ եղավ ստեղծելու եկեղեցական իշխանապետություն, որի նպատակը եկեղեցու դավանանքի ազգայնացումն էր և եկեղեցու կազմակերպությունը ազգային շահերին ծառայեցնելը: Սկսվեց մի հետաքրքիր, ուրույն և բարդ պատմական ընթացք, որի հիմքերը դրեց Շահապիվանի եկեղեցական ժողովը և հաստատագրեց Ավարայրի ճակատամարտը:

3. Առաքելական եկեղեցու ազգայնացումն անգերագնահատելի երևույթ էր հայ մշակույթի, աշխարհընկալման, ազգային ինքնագիտակցության ձևավորման, զարգացման և դրսևորման իմաստով: Քրիստոնեական դավանանքի ազգայնացումը հիմք դրեց հայ միջնադարյան քրիստոնեական հոգևոր և նյութական մշակույթին, որը համընդհանուր քրիստոնեական մշակույթի անբաժանելի մաս լինելով հանդերձ՝ խիստ ազգային էր իր ձևով, գաղափարական նպատակաուղղվածությամբ, արտահայտչամիջոցներով և աշխարհազգացողության կերպով: Ձեռք բերելով ազգային բովանդակություն և մեկնաբանություն՝ քրիստոնեությունը ներծծվեց հայ մարդու հոգեբանության և ինքնագիտակցության մեջ, որն անցնելով դարավոր ճանապարհ՝ դարձավ ազգային հավաքական հոգեբանություն և ինքնագիտակցություն: «Հայ քրիստոնյա» արտահայտությունը, որ դարձել է բազմաթիվ սերունդների ինքնաճանաչողական հիմնական ըմբռնումը քրիստոնեության ազգայնացման լավագույն դրսևորումներից մեկն է:

4. Հայ եկեղեցու դերը և նշանակությունը հատկապես մեծ էր Հայաստանում անկախ կենտրոնական թագավորական իշխանության բացակայության ժամանակահատվածներում, երբ եկեղեցին փորձում էր իր կազմակերպությամբ և

դերով փոխարինել պետական իշխանությանը: Համապատասխանաբար եկեղեցու բարձրաստիճան գործիչներն իրենց ուսերի վրա էին վերցնում երկրի հասարակական-քաղաքական և մշակութային հարաբերությունների առաջնորդի դերը և այս առումով եկեղեցին հանդես էր գալիս որպես համահայկական կառույց:

5. Հայ եկեղեցու ազգայնացումն, անշուշտ, կարևոր նշանակություն ուներ նաև ընդհանուր քրիստոնեության, քրիստոնեական աշխարհայացքի և քրիստոնեական մշակույթի համար: Այն տիեզերական քրիստոնեությանը տվեց նոր երանգ և իմաստավորում, դրանով մեծապես հարստացնելով քրիստոնեական աշխարհընկալումն ուրույն մեկնաբանությամբ և նոր բովանդակությամբ: Հայ աստվածաբանական և մեկնողական միտքը մեծ ներդրում ունի միջնադարյան կրոնա-փիլիսոփայական մտքի զարգացման մեջ և, անշուշտ, քաղաքակրթական զգալի արժեք է: Հայ միջնադարյան մշակույթն ևս, իր բոլոր դրսևորումներով, համընդհանուր քրիստոնեական քաղաքակրթության և մշակույթի անբաժանելի մասն է:

6. 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվում է որպես պետական կրոն: Հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական այդ խոշոր իրադարձությունը չէր կարող չազդել նաև հասարակական հարաբերությունները կարգավորող սոցիալական նորմերի վրա: Քրիստոնեության հաղթանակով, աշխարհիկ օրենսդրությանը զուգահեռ, ձևավորվեց նաև հայ եկեղեցական (կանոնական) իրավունքը: Խնդրո ժամանակաշրջանի քաղաքական պայմանները, մասնավորապես, հայոց պետականության անկումը, խանգարեցին աշխարհիկ օրենսդրության զարգացմանը և, ընդհակառակը, խթանեցին հայ կանոնական իրավունքի ձևավորմանն ու զարգացմանը: Ստեղծված պայմաններում հայոց եկեղեցին միանձնյա իր ձեռքում կենտրոնացրեց իրավաստեղծ և արդարադատության գործառույթները:

7. Հայ կանոնական իրավունքը կարգավորում էր ոչ միայն եկեղեցուն և հոգևորականությանը վերաբերող հարցերը, այլև քաղաքացիական, ժառանգական, քրեական իրավունքի (օրինակ, սպանության, առևանգման և տարբեր տեսակի հակաբարոյական արարքների) բնագավառի որոշակի հարաբերությունները: Անհրաժեշտ է նշել, որ հայ կանոնական իրավունքը գրեթե

ամբողջությամբ կարգավորել է ամուսնա-ընտանեկան հարաբերությունները: Այսպես, կանոնական իրավունքը նորմավորեց նշանադրությունը, պսակադրությունը, ամուսնալուծությունը և, մասամբ, ամուսինների գույքային հարաբերությունները, խնամակալությունը, հոգաբարձությունը և որդեգրումը:

8. Հեղինակի կողմից առաջարկվում է հայ կանոնական իրավունքի հետևյալ բնորոշումը. հայ կանոնական (եկեղեցական) իրավունքը կրոնական-իրավական նորմերի հանրագումար է, որը կարգավորում է եկեղեցու նվիրապետական կառուցվածքը, ներեկեղեցական հասարակական հարաբերությունները, ինչպես նաև որոշակի աշխարհիկ բնույթի հարաբերություններ, կապված՝ ամուսնաընտանեկան, մասամբ նաև քաղաքացիաիրավական և քրեաիրավական հարաբերությունները:

«Կանոնագիրք Հայոց»-ը որպես իրավաբանական փաստաթուղթ, օժտված է նորմատիվ իրավական ակտերին բնութագրական անհրաժեշտ հատկանիշներով. ձևական որոշակիությամբ, պաշտոնական-իշխանական բնույթով, նորմատիվությամբ, բարձր հեղինակությամբ, հրապարակայնությամբ և անմիջական գործադրությամբ:

9. Հայ կանոնական իրավունքը համաշխարհային իրավագիտության և օրենսդրության պատմության մեջ հանդիպող այն հազվագյուտ իրավական ակտերից է, որը ձևավորվելով վաղ միջնադարում, պահպանեց իր կենսականությունը և իրավաբանական զորությունը՝ իրավակարգավորումների ոլորտում, հետագա երկար ու ձիգ դարերի ընթացքում: Այսօր էլ հայ կանոնական իրավունքը Հայրենիքում և Սփյուռքում շարունակում է իր առաքելությունը՝ հոգևորականների, հայտնի չափով և ծավալով ամուսնաընտանեկան և կրթական հարաբերությունների իրավական կարգավորման գործում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Մենագրություն՝ «Հայ կանոնական (եկեղեցական) իրավունքի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները (պատմահրավական վերլուծություն)», Երևան, Եվրոպրինտ, 2016, 128 էջ:

2. «Կանոնագիրք հայոց»-ը միջնադարյան հայ իրավունքի աղբյուր //«Օրինականություն», Երևան, N 82, 2014, էջ 49-54:

3. Հայ կանոնական իրավունքի սկզբնավորումը //«Արդարադատություն», Երևան, 2015, Մարտ, N 1 (28), էջ 14-20:

4. Դավիթ Ալարվկաորդու կանոնական օրինադրությունները //«Արդարադատություն», Երևան, 2015, Հունիս, N 2(29), էջ 14-19:

5. «Կանոնագիրք Հայոց»-ի իրավաբանական բնույթը. ընդհանուր բնութագիրը //«Արդարադատություն», Երևան, 2015, Դեկտեմբեր, № 4(31), էջ 8-13

6. Հայ կանոնական իրավունքի օրինակարգումը (կոդիֆիկացիան) //«Օրինականություն», Երևան, N 91, 2016, էջ 57-61:

Марикян Размик Левонович

Формирование и развитие армянского канонического (церковного) права в IV-XII веках (историко-теоретический анализ)

Резюме

Настоящая работа посвящена всестороннему изучению вопросов формирования и развития армянского канонического права.

Обращение к накопленным в прошлом опыту и знаниям, проверенных в процессе исторического развития концепциям, критериям мысли, традициям, классикам и стабилизированным системам ценностей во все времена выступало в качестве одной из важнейших форм социально-духовного существования, самопознания и самоутверждения как всего человечества, так и конкретного общества и нации. В этом плане, автор подчеркивает, что изучение древнего и средневекового армянского (светского и религиозного) права причисляется к роду арменоведческих исследований, следовательно изучение армянского религиозного права имеет не только научно-познавательное, но и прикладное значение и получило актуальное звучание.

Источники древнейшего периода армянского церковного права - переводные (с греческого и ассирийского) и самостоятельные (национальные) канонические первоисточники, начиная с IV века были собраны в сборниках. Составленный в начале VIII в. Католикосом Ованнесом Одзнеци (717-728 гг.) сборник дошел в рукописях под названием Книга канонов.

Актуальность настоящей диссертационной работы состоит также в том, что каноническое право в средние века занимало уникальное положение в правовых системах, расцвет которых пришелся на позднее средневековье. С небольшим исключением, канонические нормы применялись повсюду - в апостольском, католическом, ортодоксальном христианском мире. Обращение к исследованию канонического права является одной из возможностей показать, что в условиях современной правовой интеграции на формирование и развитие общего европейского права значительно повлияло каноническое право - наряду с римским

правом. То же можно отметить и об армянском средневековом праве: система национального права разделена на две подсистемы - светского (традиционное) и армянского канонического права.

Научная новизна исследования состоит в том, что в постсоветском отечественном правоведении автор впервые подвергнул комплексному и систематизированному историко-теоретическому и сравнительно-правовому анализу развитие армянского канонического права - от образования до XII века. В работе обоснован тезис, согласно которому армянское каноническое право в древние и средние века в социально-правовом и практическом плане всегда занимало передовое (преобладающее) место в системе национального права. Даже в случае национальных судебников (судебников Мхитара Гоша и Смбата Спарапета) являлось основным источником этих правовых актов.

Средневековое армянское каноническое право, несмотря на определенные ограничения его правового урегулирования, сыграло значительную роль в политической, экономической и общественной жизни феодального общества. В средние века оно явилось значимой составляющей в интеллектуальном развитии общества, и каноники смогли найти решения, адекватные как старым, так и только возникающим правовом задачам и способствовали формированию и развитию правовых идей и концепций на практике.

Границы между армянскими каноническими и светскими правовыми системами остаются легко проницаемыми на протяжении всего средневековья вплоть до нового времени, сохраняя преобладание канонического права над светским (традиционным) правом - при отсутствии централизованной царской власти.

Армянское каноническое право наделено такими комплексными социально-правовыми свойствами, которые позволяют рассматривать его в качестве целостной нормативной системой урегулирования общественных отношений, включающей в себя значительную область социально-правового урегулирования не только духовных, но и светских отношений.

Результаты исследования могут использоваться в качестве теоретической базы для новых исследовательских работ, а также материалов для учебного процесса подготовки и переподготовки юридических кадров, в частности, при преподовании спецкурсов «Каноническое право», «Источники права», «Право и религия».

Marikyan Razmik Levon

Formation and development of 4th-12th centuries Armenian canon (religious) law (historical-theoretical analysis)

Summary

This paper deals with a comprehensive study of the formation and development of the Armenian canon law.

Appeal to the past experience and knowledge, proven in the course of the historical development of concepts, criteria of thought, traditions, classics and stable systems of values at all times acted as one of the most important forms of social and spiritual existence, self-knowledge and self-assertion by the whole of mankind, as well as by the particular society and the nation. In this regard, the author emphasizes that the study of ancient and medieval Armenian (secular and religious) rights ranked as sort on Armenian studies, therefore, the study of the Armenian religious law has not only a scientific- informative but also practical value and obtained the actual sound.

Sources of the most ancient period of the Armenian church law are translated (from Greek and Assyrian languages), and independent (national) canonical primary sources, from the 4th century were assembled in collections. The miscellany, composed at the beginning of the 8th century by Catholicos Hovhannes Odznetsi (717-728) is preserved in a collection of manuscripts, entitled The Book of the canons.

The relevance of this thesis consists in the fact that canon law in the Middle Ages took a unique position in the legal systems, which flourished in the late Middle Ages. With few exceptions, the canonical norms have been applied everywhere - in the Apostolic, Catholic, orthodox Christian world. Appeal to the study of canon law is one of the opportunities to show that in today's legal

integration in the formation and development of a common European law the canon law, along with Roman law have significantly influenced. The same can be noted about Armenian medieval law: national law system is divided into two subsystems - the secular (traditional) and the Armenian canon law.

The scientific novelty of the research lies in the fact that for the first time in the post-Soviet domestic jurisprudence the author has performed a comprehensive and systematic historical and' theoretical and comparative legal analysis of the development of the Armenian canon law - from its formation up to the 12th century. The author of the work deliberately substantiates the thesis that the Armenian canon law in ancient and medieval times, in socio-legal and practical sense, has always been in advanced (dominant) position in the national legal system. Even in the case of the national Code of Law (Codes of Law by Mkhitar Gosh and Smbat Sparapet) it was the main source of these legal acts.

Armenian medieval canon law, despite the limitations of its legal settlement, played a significant role in the political, economic and social life of feudal society. In the Middle Ages it was a significant component in the intellectual development of the society, and the canons were able to find solutions adequate to both old and just emerging legal problems and contributed to the formation and development of legal ideas and concepts into practice.

The boundaries between the Armenian canon and secular legal systems are easily permeable throughout the Middle Ages right up to modern times, while maintaining the predominance of canon law over secular (traditional) law at the conditions of the absence of a centralized royal power.

Armenian canon law is endowed with such complex socio-legal properties that allow us to consider it as an integrated regulatory system regulating social relations, including a significant area of the socio-legal settlement of not only the spiritual but also the secular relations.